ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1112/12604
28.11.2016թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
ք.Երեւան, Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ս.թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ԱԳՆ ուղղված Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ 2014թ. նոյեմբերի 4-ի 2244-Ա ՀՀ ԱԳ նախարարի հրամանով ՀՀ արտաքին գործերի նախարարությանում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձիք են նշանակվել ՀՀ ԱԳ նախարարի մամուլի քարտուղար Տիգրան Բալայանը և Մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության պետ Տիգրան Մկրտչյանը:

Հաշվի առնելով, որ 2016թ" մայիսին Տիգրան Մկրտչյանը նշանակվել է Լիտվայում ՀՀ արտակարգ ու լիազոր դեսպան, ներկայումս ՀՀ ԱԳՆ-ում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ է հանդիսանում միայն Տիգրան Բալայանը:

Համապատասխան տեղեկատվությանը այդ պաշտոնատար անձի վերաբերյալ տեղադրված է ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջում՝ http://mfa.am/hy/structure/info/78/:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող՝ Արամ Արարատյան
Հեռ.՝ (060) 620-206

Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2, Երևան 0010: Հեռ. +374 60 620000, ֆաքս +374 60 620062
2 Government House, Republic Square, 0010 Yerevan, Tel: +374 60 620000, Fax: +374 60 620062, E-mail: info@mfa.am, www.mfa.am